

Հաստատում եմ՝

«Հեղինակային նախարարության գլխավոր քարտուղարի

պաշտոնակատար՝ Ա.Կառապետյան

(Պատվիրատուի ղեկավար անուն առաջնում)



Արձանագրություն N 3

«ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման)

ք. Երևան

22 հունվարի 2020թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Տ.Գաբրիելյան

քարտուղար՝ Մ.Գրիգորյան

անդամներ՝ Ա.Դանիելյան, Մ.Կարապետյան

1. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ էլեկտրոնային եղանակով տեղեկացվել է մասնակիցներին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել և ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ վերջիններս շտկել և ներկայացրել են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2. ընթացակարգի մրցույթի գնահատման արդյունքների վերաբերյալ

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած (բավարար գնահատված) գնային առաջարկները՝ հանձնաժողովն **արձանագրեց՝**

ա/ «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները հավասար են:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները՝ հանձնաժողովը **որոշեց՝**

ա/ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները ... հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: *Բանակցությունները վարվում են ոչ շուրջ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը :*

Հանձնաժողովը **որոշեց՝ 29.01.2020թ. ժամը 11:00-ին** հանձնաժողովի նիստ հրավիրել՝ «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Բանակցությունները տեղի կունենան ք. Երևան, Կառավարության 3-րդ շենք , ՀՀ
Էկոնոմիկայի նախարարություն, 1-ին հարկ Տ.Գաբրիելյանի ընդունարան:


Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

նախագահ՝



Տ. Գաբրիելյան

քարտուղար՝



Մ. Գրիգորյան

անդամներ՝



Ա. Դանիելյան



Մ. Կարապետյան